ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/177

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 12.08.2020թ. թիվ 26/26-1/12044-2020 գրությամբ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.08.2020թ. թիվ V02.4/[23260]-20 գրության հիման վրա, 12.08.2020թ. թիվ 26/26-1/12044-2020 գրությամբ նախաձեռնել է «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ինչպես նշել է իր գրության մեջ Պատվիրատուն, «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն 2020 թվականի հուլիսի 23-ին մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 17-րդ չափաբաժինների մրցույթին: Մեր ընկերության կողմից ներկայացվել են առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որոնցից առաջին չափաբաժնով ապրանքի տեխնիկական բնութագիրը, ինչպես պարզվեց հետագայում, հանձնաժողովի նիստից հետո, չի համապատասխանել պատվիրատուի պահանջներին: Մենք կարծել ենք, թե նշված արտադրանքը տարբեր մասերի հավաքմամբ ստացված համակարգիչ է, այդ իսկ պատճառով որպես ֆիրմային անվանում նշել ենք մեր կողմից առաջարկվող էկրանը: Այնուհետև պատվիրատուի կողմից ուղարկվել է գրություն առկա անճշտությունը շտկելու նպատակով, որտեղ նաև նշվել է, որ նման անվանմամբ ապրանք գոյություն չունի:

Անճշտությունը շտկելու նպատակով պարզաբանում ենք ստացել, որ մեր կողմից առաջարկվող համակարգիչը պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքը չէ: Հասկանալով դա, պատվիրատուին տեղեկացրել ենք, որ մեր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը չենք կարող փոփոխել, քանի որ մեր կողմից կարող է առաջարկվել միայն այդ արտադրանքը, սակայն նրա ներկայացուցիչը պնդել է, որպեսզի գրենք հենց այն ապրանքի անվանումը որը իրենց անհրաժեշտ է, հակառակ պարագայում կնախաձեռնեն մեր ընկերությանը «սև ցուցակում» ներառելու գործընթաց: Հաշվի առելով այն, որ նման գործողությունները կբերեին օրենքի խախտման, քանի որ մեր կողմից կներկայացվեր կեղծ տեղեկատվություն, ուստի հրաժարվել ենք դա անել և մեր կողմից ներկայացվել է այն արտադրանքը, որը ընկերությունը կարող էր մատակարարել:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 4-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժվել է «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի 1-ին չափաբաժինը՝ հրավերով նախատեսված պայմաններին

չհամապատասխանելու հիմքով, ինչի վերաբերյալ մեր ընկերությունը առարկություն չի ունեցել, գիտակցելով, որ մեր կողմից ներկայացված ապրանքը չի բավարարում պատվիրատուի պահանջներին:

Այնուհետև, մեզ համար անհասկանալի հիմքերով պատվիրատուն նախաձեռնել է «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց: Խնդրում ենք ֆիքսել, որ պատվիրատուն նման գործընթաց նախաձեռնելու հիմքերը չի նշել, քանի որ այդպիսիք չկան:

Հարգելի պարոն Ներսիսյան, խնդրում ենք հաշվի առնել այն փաստը, որ մեր կողմից կատարված անճշտությունը կատարվել է ոչ միտումնավոր և դրանով որևէ նպատակ չենք հետապնդել, ավելին մեր կողմից ներկայացված մյուս չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ բավարարել են գնահատող հանձնաժողովի պահանջներին:

Բացի դրանից, հավաստիացնում ենք, որ մեր կողմից որևէ կեղծ տեղեկատվություն չի ներկայացվել, մեր ընկերությունը չի հրաժարվել իր որևէ ստանձնած պարտավորության կատարումից, ինչպես նաև մենք չենք հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, քանի որ առաջին տեղ գրված մասնակից ենք ճանաչվել 17-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքների մատակարարման նպատակով և պատրաստ ենք պատշաճ կերպով իրականացնել մեր ստանձնած պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք դադարեցնել Պատվիրատուի կողմից «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը՝ հիմքերի բացակայությամբ պայմանավորված»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/177 ընթացակարգի շրջանակներում 19.08.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.08.2020թ. թիվ V02.4/[23260]-20 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի գնման ընթացակարգ: Գնանշման հարցման մասնակիցների թվում հայտ է ներկայացրել նաև «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 30-ի 2-րդ նիստի 3-րդ որոշմամբ, ի թիվս մի շարք այլ մասնակիցների, «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել հայտով ներկայացված թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունների շտկում՝ հրավերի պահանջների նկատմամբ: Հանձնաժողովի քարտուղարն այդ մասին հուլիսի 31-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում բոլոր մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «Լիկա-Ալեն» ՍՊ ընկերության 1-ին չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը կրկին չի համապատասխանել հրավերի պահանջներին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 04-ի 3-րդ նիստի 2-րդ որոշմամբ մերժվել է «Լիկա-Ալեն» ՍՊ ընկերության 1-ին չափաբաժինը հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/177 ընթացակարգի շրջանակներում 19.08.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/177 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 1-ին չափաբաժնում նշված մակնիշով ամբողջը մեկում համակարգիչ չի գտնվել, անհրաժեշտ է ուղղել մակնիշը և օպերատիվ հիշողության ծավալը համապատասխանեցնել հրավերի պահանջին:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելու վերաբերյալ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 31.07.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 1-ին չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը ևս չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես՝ ներկայացված մակնիշով համակարգիչը ամբողջը մեկում համակարգիչ չէ, ինչպես նաև ներկայացված համակարգչի օպերատիվ հիշողության ծավալը չի համապատասխանում հրավերի նվազագույն պահանջին:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10 կետի պահանջները, որոշում է կայացրել «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.08.2020թ. թիվ 26/26-1/12044-2020 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 06.08.2020թ. թիվ V02.4/[23260]-20 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված***

<u>պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, սակայն Հավելված 1.1-ում 1-ին չափաբաժնում նշված մակնիշով ամբողջը մեկում համակարգիչ չի գտնվել, անհրաժեշտ է ուղղել մակնիշը և օպերատիվ հիշողության ծավալը համապատասխանեցնել հրավերի պահանջին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով մասնակցին տեղեկացնելու վերաբերյալ՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 31.07.2020թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն 1-ին չափաբաժնի շտկված տեխնիկական բնութագիրը ևս չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես՝ ներկայացված մակնիշով համակարգիչը ամբողջը մեկում համակարգիչ չէ, ինչպես նաև ներկայացված համակարգչի օպերատիվ հիշողության ծավալը չի համապատասխանում հրավերի նվազագույն պահանջին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10 կետի պահանջները, որոշում է կայացրել «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված

ժամկետում ներկայացրել է շտկման ներկայացված փաստաթուղթը, սակայն շտկման արդյունքում ներկայացված փաստաթղթերում կրկին արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնով ներկայացված «Համակարգիչ ամբողջը մեկում» գնման առարկայի մասով շտկված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, կրկին չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով տվյալ չափաբաժնի համար սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրի պահանջներին, հետևաբար գտնում եմ, որ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2020/8-5-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 12.08.2020թ. թիվ 26/26-1/12044-2020 գրությամբ «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լիկա-Ալեն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**